

ՓՈԽԸՄԲՈՒՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Գյումրու Մուշ-2 թաղամասում Մուշ Զարգացման կենտրոն ՀԿ-ի ենթակայությամբ գործող մանկապարտեզի համաֆինանսավորումն իրականացնելու մասին

“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաձյուղը (այսուհետ՝ ՎՎՀ), ի դեմս Ծրագրի տնօրեն Ժիրայր Էդիլյանի, մի կողմից, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի “Մուշ” Զարգացման կենտրոն” ՀԿ-ն (այսուհետ՝ “Մուշ” ՀԿ), ի դեմս ՀԿ-ի տնօրեն Աննա Սահակյանի, երկրորդ կողմից, և Գյումրու քաղաքապետարանը (այսուհետ՝ Քաղաքապետարան), ի դեմս քաղաքապետ Սամվել Բալասանյանի, երրորդ կողմից, բոլորը միասին այսուհետ՝ Կողմեր.

հաշվի առնելով, որ.

ա) ՎՎՀ-ն իրականացնում է բարեգործական ծրագրեր Հայաստանում, որոնց հիմնական նպատակն է բարելավել երեխաների բարեկեցության մակարդակը Հայաստանի տարբեր համայնքներում և բարենպաստ պայմաններ ստեղծել երեխաների զարգացման և կրթման համար;

բ) Մուշ ՀԿ-ն արդեն 12 տարի ՎՎՀ-ի աջակցությամբ իրականացնում է 2 խմբանոց մանկապարտեզի գործունեություն՝ իրեն անհատույց օգտագործման իրավունքով տրված թիվ 42 ավագ դպրոցի տարածքում;

գ) Քաղաքապետարանը նույնպես ցանկանում է աջակցել Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեությանը;

դ) Կողմերը համաձայնության են եկել համագործակցել Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասում գործող միակ մանկապարտեզի գործունեության շարունակականությունն ապահովելու և չորս տարվա ընթացքում այն Գյումրի համայնքի սեփականությանը հանձնելու ուղղությամբ:

Կողմերը կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Հուշագրի շրջանակներում Կողմերը համաձայնվում են համագործակցել Շիրակի մարզի Գյումրու Մուշ-2 թաղամասի մանկապարտեզի գործունեության շարունակականությունն ապահովելու ուղղությամբ (այսուհետ՝ Ծրագիր):

1.2. Ծրագրի իրականացման նպատակով Գյումրու քաղաքապետարանը պարտավորվում է.

1.2.1. 2015-ի 4-րդ եռամսյակում Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար եռամսյակի անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 25 տոկոսի չափով:

1.2.2. 2016-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 50 տոկոսի չափով:

1.2.3. 2017-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 75 տոկոսի չափով:

1.2.4. 2018-ից սկսած Մուշ ՀԿ-ին տարեկան հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 100 տոկոսի չափով::

1.3. Ծրագրի իրականացման նպատակով ՎՎՀ-ն պարտավորվում է.

1.3.1. 2015-ի 4-րդ եռամսյակում Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 75 տոկոսի չափով:

1.3.2. 2016-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 50 տոկոսի չափով:

1.3.3. 2017-ին Մուշ ՀԿ-ին հատկացնել դրամաշնորհ՝ քաղաքապետարանում գործող նորմերին համապատասխան 2 խմբանոց մանկապարտեզի բնականոն գործունեության համար տարեկան անհրաժեշտ բյուջեի ընդհանուր գումարի 25 տոկոսի չափով:

1.3.4. Սկսած 2018թ.ից ՎՎՀ դադարեցնում է մանկապարտեզի գործունեության համար տրվող իր աջակցությունը Մուշ ՀԿ-ին:

1.4. Ծրագրի իրականացման նպատակով Մուշ ՀԿ-ն պարտավորվում է.

1.4.1. կազմակերպել 2 խմբանոց մանկապարտեզի ընթացիկ գործունեությունը՝ պահպանելով պետության կողմից սահմանված բոլոր նորմերն ու չափորոշիչները:

1.4.2. ս/թ հոկտեմբեր ամսից երկարաձգել Գյումրի, Մուշ-2 թաղամաս 4/18 հասցեում գործող թիվ 42 ավագ դպրոցի հետ կնքված պայմանագիրը՝ դպրոցի տարածքն անվարձահատույց օգտագործելու մասին:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. *Ծրագրի բարեհաջող իրականացման համար ՎՎՀ-ն պարտավորվում է.*

2.1.1. շարունակել է իր աջակցությունը Մուշ ՀԿ-ին համայնքում մանկապարտեզի գործունեությունն իրականացնելու համար՝ համաձայն սույն պայմանագրի 1.3. կետի:

2.2. *ՎՎՀ-ն իրավունք ունի.*

2.2.1. իր ներկայացուցիչների միջոցով վերահսկել Ծրագրի իրականացման ողջ ընթացքը.

2.2.2. հաշվետվություն պահանջել մյուս Կողմերից ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ.

2.2.3. կողմերից պահանջել կատարելու սույն հուշագրով ստանձնած իրենց պարտավորությունները:

2.3. *Սույն հուշագրի շրջանակներում Քաղաքապետարանը պարտավորվում է.*

2.3.1. Տրամադրել մանկապարտեզի հաստիքների տարեկան ֆինանսավորումը՝ համաձայն սույն պայմանագրի 1.2 կետի:

2.4. *Քաղաքապետարանն իրավունք ունի.*

2.4.1. իր ներկայացուցիչների միջոցով վերահսկել Ծրագրի իրականացման ողջ ընթացքը.

2.4.2. հաշվետվություն պահանջել մյուս Կողմերից ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ

2.4.3. կողմերից պահանջել կատարելու սույն հուշագրով ստանձնած իրենց պարտավորությունները:

2.5. *Սույն հուշագրի շրջանակներում Մուշ ՀԿ-ն պարտավորվում է.*

2.5.1. կազմակերպել մանկապարտեզի ընթացիկ գործունեությունը՝ պահպանելով պետության կողմից սահմանված բոլոր նորմերն ու չափորոշիչները:

2.5.2. ներկայացնել ֆինանսական և նկարագրական հաշվետվություններ մյուս Կողմերին ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ:

2.5.3. Սույն հուշագրի ավարտից և ՎՎՀ-ի ֆինանսավորումը դադարելուց հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերագրանցվել որպես ՀՈԱԿ և ստանալ համապատասխան լիցենզիա:

**2.6. Սուշ ՀԿ-ն իրավունք ունի.**

2.6.1. կողմերից պահանջել կատարելու սույն հուշագրով ստանձնած իրենց պարտավորությունները:

**3. ՕՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ**

3.1. Կողմերը համաձայնվում են, որ յուրաքանչյուր տարի Գյումրու Սուշ-2 համայնքի մանկապարտեզի համաֆինանսավորման փաստը պետք է հաստատվի եռակողմ ակտով, որը ստորագրում են ՎՎՀ-ի Շիրակի մարզի ղեկավարը, Գյումրու քաղաքապետարանի լիազոր ներկայացուցիչը և <<<Սուշ>> Զարգացման Կենտրոն>> ՀԿ-ի տնօրենը:

**4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

4.1. Հուշագրի ժամկետը

Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում այն եռակողմանի ստորագրելուց հետո և գործում է մինչև 2018թ. դեկտեմբերի 30-ը:

4.2. Հուշագրի վաղաժամկետ լուծումը

Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից, եթե մյուս կողմերից որևէ մեկը չի պահպանում հուշագրի դրույթները:

4.3. Հուշագրի փոփոխություններն ու լրացումները

Սույն հուշագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները վավեր են, եթե դրանք կատարված են գրավոր ձևով, եռակողմանի ստորագրված և կնքված են:




4.4. Վեճերի լուծումը

Սույն հուշագրի հետ կապված բոլոր վեճերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով կամ այլ համաձայնեցված կարգով: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը կլուծվեն Հայաստանի Հանրապետության (ՀՀ) դատարաններում՝ ՀՀ օրենքների համաձայն:

**4.5. Հուշագրի օրինակները**

Սույն հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավական ուժ ունեցող երեք օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

<p>“Վորլդ Վիժն Ինթերնեշնլ” ՄԲԿ հայաստանյան մասնաձյուղ Երևան, Ռ. Մելիքյան 1 ՀՎՀՀ 02528755 h/h՝ 220413350210000 Կրեդիտ Բանկում բանկետ Ճիրայր Երևան 02528755</p> 	<p>Սուշ զարգացման կենտրոն ՀԿ Գյումրի, Սուշ-2 թաղամաս, ՀՎՀՀ 05535275 h/h 16013 001178800 ՎՏԲ Հայաստան բանկ Աննա Սահակյան 05535275</p> 	<p>Գյումրու քաղաքապետարան Գյումրի, Վարդանանց 1 ՀՎՀՀ 05511159 Հ/հ 900215301061363 Գյումրու ՏԳԲ Սամվել Բալասանյան</p> 
---	---	---